

**Տ. ԿՅՈՒՐԵՂ ԱԲԵՂԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**
(14 փետրվարի 2005 թ.)

«Այդ լույսն էր ճշմարիտ լույսը, որ լուսավորում է ամեն մարդու»:

(Հովհ. Ա 9)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն»:

Աստվածախոս Հովհաննես ավետարանցի քաղցրաբարբառ շրթներից հնչած այս արքայապաշտությունն է, որն իբրև բնաբան ընտրել ենք իմանալի Արեգակի և խոնարհյալ, բայց փրկաբեր Լույսի՝ 40-օրյա մանկացյալ Հիսուս Քրիստոսի Տաճար ընծայման, այսինքն՝ Տյառն-ընդառաջի հիշապարտության սրբազան այս փոռակապարտության օրվա առիթով:

Ղուկաս ավետարանիչը պատմում է, որ երբ լրանում է Հիսուս մանկան ծննդյան 40-րդ օրը, նրա ծնողները՝ Հովսեփ Արդարն ու Մարիամ Աստվածածինը, համաձայն Մովսես մարգարեի ավանդած օրենքի, իրենց մանկանը փրանում են Երուսաղեմի փաճար՝ Աստծուն ընծայելու, Տիրոջը ներկայացնելու, ըստ Տյառնագիր այն օրինադրության, որ ամեն արգանդ բացող արու զավակ Տիրոջ համար սուրբ պիտի կոչվի (Խմմյ. Ղուկ. Բ 23) և Քրիստոսին՝ իբրև իրենց անդրանիկ զավակ, փաճարի ծառայությունից ազատելու համար փրկագին վճարելու գույք պատրակ կամ աղավառ երկու ձագ:

Ավետարանցի վկայության համաձայն, Երուսաղեմում Միմեռն անունով մի արդար ու աստվածավախ մարդ կար՝ բավականաչափ առաջացած փարիքում, որին Սուրբ Հոգուց հրամայված էր մահ չբռնել, մինչև որ րեսնի Տիրոջ Օծյալին: Երբ մանկացյալ 40-օրյա Աստվածորդուն ծնողները բերում են փաճար՝ «նրա վրա կարարելու, ինչ որ օրենքի սովորության համաձայն էր», Միմեռնը Սուրբ Հոգով ներշնչված ընդառաջ է ելնում նրանց, Մանկանն առնում է իր գիրկը և կարարելով օրենքի պահանջը՝ օրհնում է Բարձրյալն Աստծուն, Նրա մարդացած Որդուն, Մանկան ծնողներին և գոհաբանում ասելով. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությամբ արձակիր Քո ծառային՝ ըստ Քո խոսքի, որովհետև աչքերս րեսան Քո փրկությունը, որ պարարասրեցիր բոլոր ժողովուրդների առաջ. Լույս, որ կլինի հայրնություն հեթանոսների համար, և փառք Քո ժողովրդի համար» (Ղուկ. Բ 29-32):

Սակայն արդյո՞ք Աստվածամայրը մանկան ծնվելուց հետո մաքրագործման, իսկ Մանուկը՝ փաճար ընծայման կարիքն ունեին, կամ արդյո՞ք նրանց կողմից անհրաժեշտություն կար աստվածադիր օրենքի կարարմանը: Իհարկե՛ ո՛չ, սակայն սա կարարվեց՝ որպես նախապարարասրում մկրտության, որին, անշուշտ, ևս կարիքը չունեին մեր Տերը, սակայն կարարվեց, որպեսզի աստվածագիր օրենքում ասվածի համաձայն միայն արու զավակներն Աստծո համար սուրբ չհամարվեն, այլ նաև մենք՝ քրիստոնյաներս, այս սուրբ ավագանից հոգեպես ծնվածներս՝ մկրվածներս. կարարվեց Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կողմից՝

իրեն բացարձակ խոնարհության փեսանելի և երևելի լավագույն դրսևորման ոսկեկապ շղթայի մի մասնիկ, ինչպես 40 օրեր առաջ հրաշափառ Ծնունդն էր և 32 օրեր առաջ՝ անվանակոչությունը:

Խոնարհության գերօրինակ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, կապարեց Իր իսկ հասարակած աստվածադիր բոլոր օրենքները՝ աստվածային արդարության իրագործման համար և ի լրումն ու կատարումն օրենքների, կամ ինչպես շարականագիրն է ասում. «Այսօր փաճար եկար՝ կատարելու օրենքը՝ մարդկանց փրկության համար»: Իսկ մեզ ավանդեց և մատուցեց աստվածախոսային առաքիլություն խոնարհությունը: Խոնարհություն, որ վանելով արելություն՝ ծնում է սեր, փոխան հակառակության, հուսահատության, թշնամության փարածում է ներդաշնակություն, հույս, ներողամտություն, երջանկություն, մերժում է խավարն ու ստվերը՝ սփռելով լույս ու ջերմություն:

Խոնարհություն, որ խոնարհվեց՝ մեր մարդկային բնությունը հագնելու. խոնարհություն, որ խոնարհվեց՝ աշակերպների ուրբերը լվանալու. խոնարհություն, որ խոնարհվեց՝ մեղավոր մարդուն իր մահվամբ սրբագործելու և աստվածացնելու: Խոնարհություն, որ զովաբանվում և փարփողվում է Առակաց և Իմաստության գրքերում. «Տերը շնորհ է փալիս խոնարհներին» (Առակաց Գ- 34), «Խոնարհեցրու քո անձը և շնորհ կգտնես Տիրոջ առջև, քանզի մեծ է Տիրոջ զորությունը, և Նա փառավորում է Իր կամքը կատարող խոնարհներին» (Սիրաքի իմաստ. Գ 20):

Տերունագարդ այս փոնի նախօրյակին՝ երեկ, նախափրոնական երեկոյան ժամերգությանը զուգակցված գեղեցիկ արարողություններից է եկեղեցու բակում խարույկ վառելը և այդ կրակից մոմերով մեր ընտանեկան հարկերը լույս փանելը: Մակայն խոստափենք գեղեցիկ այս սովորությունից զար առկա խոտելի ու մերժելի սնահավատության փրանող, այսինքն՝ կրակից ակնկալելի սին պատրանքներից և սնոքիապաշարությունից, որպեսզի բաժնեկից չլինենք Արարիչ Աստծո կողմից կայծակնամաքուր Եսայի մարգարեի բերանով հանդիմանության արժանացած ժողովրդին, որ իզուր իրենց հույսը դրել են ստության վրա, այլ հիշենք ու ձայնակից լինենք Աստծուն հույս և ապավեն դարձրած Դավթի սաղմոսերգությանը. «Նույսդ դի՛ր Աստծո վրա, օրհներգի՛ր Նրան, իմ անձը փրկողն Աստված է» (Մաղմոս ԽԱ 12):

Հիմա արժե անդրադառնալ և հարցում անել, թե արդյոք ո՞րն է իմաստը Տյառնընդառաջի, կամ թե ինչո՞ր ենք 40-օրյա մանուկ Հիսուսին փաճար ընծայման փոնին կրակ վառում, ինչո՞ր ենք Աստծուն լույս կոչում: Հրաշալի բացատրություններ են փրված մեր եկեղեցական աստվածաբան հայրերի կողմից: Երբ Տերը փաճարին մոտեցավ, քաղաքի բնակիչները գիշերվա պատրճառով վառվող ջահերով ու ճրագներով ընդառաջ դուրս ելան՝ լուսավորելու և կրակը ծառայեցնելու ճշմարիտ լույսին, ինչպես իր ավետարանի սկզբում հայտարարում է Նովիաննես ավետարանիչ. «Այդ լույսն էր ճշմարիտ լույսը, որ լուսավորում է ամեն մարդու» (Նովի. Ա 9): Իսկ Տյառնընդառաջին խարույկ ենք վառում՝ որպես խորհրդանշ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի՝ համաձայն այն խոսքի, որ ասաց. «Ես եմ աշխարհի լույսը. ով իմ հետեւից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կյանքի լույսը» (Նովի. Ը 12): Ուրեմն, Աստված ճշմարիտ լույս է, որ լուսավորում է մեր կյանքը, ջերմացնում մեր սիրտն ու հոգին, բյուրեղացնում և հրով ազնվացնում մեր զգացմունքներն ու ձգտումները:

[illegible]

Մենք ևս այսօր և մշտապես ընդառաջ ելնենք Տիրոջը՝ աներևութաբար մեր գիրկն առնելու աստվածային բարեհաճ զթափափությամբ մարդացյալ և մանկացյալ Աստվածորդուն երկնքի և երկրի Արարչին: Ինչպես որ սրբազան այս Խորանի վարագույրները փակ էին և այսօր բացվեցին՝ մեզ հաղորդակից դարձնելու համար Հիսուս Քրիստոսին, այնպես էլ մենք մեր սրտերն ու հոգու դռները, վարագուրելով միայն մեղքի դիմաց, բացենք՝ ընդառաջ գնա-
մեր սրտերն ու հոգու դռները, վարագուրելով միայն մեղքի դիմաց, բացենք՝ ընդառաջ գնա-
լու և ընդունելու մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, որով եղավ կյանքը, և այդ կյանքը մարդ-
կանց համար լույս էր (հմմտ. Հովհ. Ա 3-4): Այս Սուրբ Խորանի անմար կանթեղից Քրիստո-
սաճառագ կենաց լույսից փրանենք ընտանեկան մեր հարկերը՝ ռդողելով աստվածապարզ
բյուր բարիքներով ու օրհնությամբ, որովհետև այս լույսն է ճշմարիտ լույսը, որ լուսավորում
է ամեն մարդու, (հմմտ. Հովհ. Ա 9), լույս, որ եղավ հայրնություն հեթանոսների համար, և
փառք.... ժողովրդի համար (հմմտ. Ղուկ. Բ 32):

Մեր կյանքի ընթացքը մաքրագարողներ, լուսավորներ ազնիվ ձգտումներով, զգեստավորված քրիստոնյա ու միախոյսներ այն լուսո որդիներին արժանի գործերով: Եվ հնչեցնենք Կաթողիկոսական այս աղոթքը. «Քրիստոսի հույրն ենք խնդրում, որպեսզի մաքրի մեր մեղքերի ժանգերն ու սրբելով պայծառացնի մեր մարմինն ու հոգիները»: